ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հուլիսի 2024 թվականի N 1127-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1666-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի «Հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների) և պետական ոչ առևտրային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների հատկացման ու շահագործման, պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը, առանձին մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակները, ավտոմեքենաների վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի, կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները, պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմին-

ներին սպասարկելու նպատակով ձեռք բերվող ավտոմեքենաների առանձին չափորոշիչները հաստատելու մասին» N 1666-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 3-րդ կետը «ավտոմեքենա:» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմին՝ նախագահի կողմից իրականացվող գործառույթների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով, բացի սույն որոշմամբ հաստատված հավելված N 3-ով սահմանված դեպքերից, ամրացվում է ևս 7 տարբերանշանով սպասարկման ավտոմեքենա:» բառերով.

2) որոշման 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«8. Հաստատել Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության մարմինների (բացառությամբ սույն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 1-ին կետում նշված մարմինների) աշխատակազմերին ամրացված ծառայողական ավտոմեքենաների հատկացման և շահագործման, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը և առանձին չափորոշիչները՝ համաձայն հավելված N 3-ի:».

3) որոշման 9-րդ կետի 1-ին ենթակետում «կազմակերպություններում» բառը փոխարինել «պետական ոչ առևտրային և առևտրային կազմակերպություններում» բառերով.

4) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-ին կետով՝

«9.1. Առաջարկել Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության մարմինների (բացառությամբ սույն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 1-ին կետում նշված մարմինների) ղեկավարներին՝ չորսամսյա ժամկետում տրանսպորտային միջոցների գնման գործընթացը համապատասխանեցնել սույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի դրույթներին և վեցամսյա ժամկետում կոմիտե ներկայացնել տեղեկատվություն սույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի կատարման ընթացքի մասին, ինչպես նաև իրականացնել ավտոմեքենաների հասանելի սահմանաչափը գերազանցող տրանսպորտային միջոցների հանձնումը կոմիտեին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:».

5) որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետում «9-րդ կետով» բառերը փոխարինել «9-րդ և 9.1-ին կետերով» բառերով.

6) որոշումը լրացնել N 3 հավելվածով՝ համաձայն հավելվածի.

7) որոշման N 2 հավելվածի 19-րդ կետի 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

18.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ